Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ընթերցելու կարողությունների զարգացման ապահովումը տարրական դասարաններում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Շողիկ Դանիելյան

2022

Բովանդակություն

Ներածություն…….. 3
ԳԼՈՒԽ I
1.1 Ընթերցելու սկզբնական կարողությունների ձևավորման առանձնահատկությունը մայրենիի դասերին…… 5
ԳԼՈՒԽ II
2.1 Ընթերցելու կարողությունների ձևավորման մեթոդները……11
2.2 Ընթերցանությա կարևոր հատկանիշներն ու ազդեցությունը երեխաների անձի ձևավորման գործընթացում……15
Եզրակացություն……17
Օգտագործած գրականության ցանկ……18

Ներածություն

Ընթերցանությունը սովորողների արժեհամակարգի ձևավորման հիմնական միջոցն է և տարրական դասարաններում այն համարվում է աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկը: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ժամանակակից դպրոցի առջև դրված արդիական խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում տարրական դասարաններում ընթերցանության կազմակերպման մեթոդիկայի, ընթերցանության անցկացման տեխնոլոգիաների, տարրական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ներարկման, դաստիարակության խնդիրները:

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը: Դեռև նախադպրոցական տարիքում երեխաները ազատ, անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը, անգամ համարձակ դատողություններ են ձևակերպում ու գնահատում իրենց միջավայրում տեղի ունեցող դեպքերն ու երևույթները: Այդ դատողությունները աստիճանաբար կարող են զարգանալ, եթե մայրենիի դասերի ժամանակ կարևորեն ինքնուրույն խոսք կառուցելու, ինքնատիպ մտածողության և դրանց համար անհրաժեշտ բառապաշար «հավաքելու» աշխատանքները:

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

Հետազոտության նպատակը: Զարգացնել կարդալու կարողությունները, բարելավել ընթերցանության իրականացման հնարավորություններն ու ուղիները: Ապահովել դրանց հետագա զարգացման շարունակականությունը:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել ընթերցելու կարողությունների ձևավորման մեթոդները:

2. Բացահայտել տարրական դասարաններում ընթերցանության կարևոր հատկանիշներն ու ազդեցությունը երեխաների անձի ձևավորման գործընթացում:
3. Զարգացնել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ:

ԳԼՈՒԽ I

1.1 Ընթերցելու սկզբնական կարողությունների ձևավորման առանձնահատկությունը մայրենիի դասերին

Կարդալու կարողությունների ձևավորումն սկսում է, դեռևս գրաճանաչության շրջանում: Կարդալ սովորեցնելը մայրենիի դասընթացի գլխավոր նպատակն է: Տարրական դասարաններում չափորոշչահեն պահանջներ են սահուն, վարժ և հասկանալով կարդալու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Սա այն հիմքն է, որը նպաստում է աշակերտի մտավոր և բարոյական որակների զարգացմանը: Որքան հաստատուն դրվի այդ հիմքը, այնքան ավելի արդյունավետ կդառնա գրքից գիտելիքներ ձեռք բերելու գործընթացը:

Ընթերցանությունը տարրական դասարաններում անցկացվող դասընթացի հիմնական բաժիններից մեկն է, որն իրականացվում է մայրենի լեզվի միջոցով: Այն հանդիսանում է մայրենի լեզվով երևույթների մասին պատկերացումների և երևույթների ուսումնասիրման և յուրացման գործոն:

Ընթերցանության մեջ են ամփոփվում ու նրա միջոցով են իրականացվում տարրական դասաններում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի ձևավորման և զարգացման, գործնական ճանապարհով լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները: Հենց այդ նկատառումներով բոլոր ժամանակներում դասարանական ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկն է համարվել:

Կրտսեր դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա կարդալ և հասկանալ գրավոր խոսքը, հաղորդակցվել մայրենի լեզվով, ընկալել խոսքը, արտահայտել սեփական մտքերը: Կարդալու կարողությունը թույլ է տալիս տեսնել, ընկալել երևույթներն ու առարկաները: Հետևաբար ընթերցել կարողանալը մեծ ազդեցություն ունի անձի ձևավորման ու զարգացման վրա: Յուրաքանչյուր ուսուցիչ կարդալ սովորեցնելու ճանապարհին պիտի կարողանա գնահատել երեխաների առաջընթացը, առկա խնդիրները: Մշակելով և իրականացնելով մեթոդների և գործառույթների բազա՝ ընթերցանության ուսուցումը դառնում է առավել արդյունավետ:

Կարդալու սկզբնական կարողություն երեխաների մեջ սկսում է ձևավորվել դեռևս նախապատրաստական շրջանում, երբ նկարների ու գծային մոդելների օգնությամբ

նրանք միավանկ ու բազմավանկ բառերը վանկերով ու ամբողջական բառերով կարդալու վարժություններ են կատարում: Կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երեք փուլերով՝ վերլուծում, համադրում և ավտոմատացում: Վերլուծական շրջանում կարդալու կարողության ձևավորումը տեղի է ունենում երկու ձեով՝ տառերի ճանաչումով և վանկերի ու բառերի մեջ դրանց հնչյունների միավորումով: Երեխայի մեջ տեղի ունեցող հոգեբանական այս երկու գործողություններն ըստ ժամանակի չեն համընկնում միմյանց հետ և առանձնահատկություններով էլ տարբերվում են միմյանցից: Այս առումով վերլուծական շրջանն իր հերթին բաժանվում է երկու աստիճանի՝

ա) տառերի ճանաչում և դրանց համապատասխան հնչյունների հետ կապակցում կամ սովորած հնչյուն-տառերի զուգորդում և

բ) վանկային վերլուծություն ու ընթերցում:

Կարդալու ուսուցումը գործող երկու այբբենարաններով սկսվում է վանկից կամ ամբողջական բառից՝ նայած ուսուցումը որ մեթոդով է տարվում և ինչը պետք է կարդալու սկզբնական միավոր դառնա: Գրաճանաչության ուսուցումը գիտական հիմքով տանելու համար այն պետք է խարսխի լեզվական միավորների՝ հնչույթի, բառի ու նախադասության վրա: Սակայն վանկի զգացողությունն անհրաժեշտություն է ոչ միայն խոսելու կամ խոսքի բնական դրսևորման, այլև կարդալու համար: Միջվանկային ոչ տևական փոքրիկ դադարները կամ բնական անջատումներն ու թուլացումներն անհրաժեշտ են ոչ միայն խոսելու, այլև կարդալու, գուցե առավել ևս կարդալու համար: Հետևաբար՝ վանկը որքան խոսելու, նույնքան էլ կարդալու համար է անհրաժեշտ, քանի որ կարդալը, ըստ էության, գրաֆիկական կամ հնչյուն խոսքի հնչյունավորումը, կենդանացնում է, իսկ կենդանի խոսքն առանց վանկային թուլացումների և ուժեղացումների գոյություն չունի: Վանկը կարդալու ուսուցման և բուն կարդալու գործողության համար նույնքան բնական անհրաժեշտություն է, որքան և կենդանի խոսքի կամ խոսելու գործողության համար: Ինչպես կարդալու, այնպես էլ հետագայում նաև պատմելու համար վանկի զգացողությունն անփոխարինելի նշանակություն ունի, որովհետև թե՞ գրելիս և թե՞ կարդալիս վանկը ընկալման, գրանցման կամ վերականգնման առաջին հիմնական միավորն է: Ընդ որում, պետք է նկատել, որ գրելու ուսուցման ժամանակ սկզբնական միավորը տառն է լինում, սակայն շուտով այն փոխվում է վանկի և մարդու գրեթե ամբողջ կյանքի ընթացքում մնում է վանկը, քանի որ

իր մտքերը կամ լսածը գրի առնելիս մարդը մտքում ինքն իրեն թելադրում է ոչ թե հնչյուններով, այլ վանկերով: Իսկ կարդալու համար այն միավոր կարող է ընդունել հենց սկզբից՝ հետագայում բառի, բառակապակցության ու բառախմբերի փոխվելու և այդ անցումն զգալի կերպով արագացնելու պայմանով: Վանկի դերն առանձնապես մեծ է կարդալու ուսուցման գործում: Այստեղ հիմնականում դժվարությունն այն է, որ որպես արտասանական միավոր շատ հեշտ ընկալվող վանկը կարդալու ժամանակ հեշտ չի տարբերակվում, քանի որ վանկի կայուն մոդել չկա, այն խիստ դինամիկ է, և երեխաները դժվար բառի մեջ ինքնուրույն կերպով չեն կարող վանկն առանձնացնել ու կարդալ: Երեխան նախ յուրացնում է տառերը և ապա, յուրացնում է նաև այդ տառերի կապակցությունը՝ սկզբում վանկերի, ապա նաև բառերի մեջ: Կարդալու մտավոր գործողության զարգացման այս աստիճանը ռուս մեթոդիստ Ա. Տրոշինն անվանել է վանկային կամ վանկերով ընթերցելու աստիճան: Չնայած այս շրջանում ուսուցիչն աշակերտներից պահանջում է կարդալ միայն վանկերով կամ ամբողջական բառերով, սակայն այդ երբեք էլ չի նշանակում, թե երեխաները միանգամից ընկալում են վանկը կամ բառը: Իհարկե, այս պահանջը միանգամայն տեղին է, սակայն այս դեպքում վանկի կամ բառի մեջ տառերի ու դրանց հնչյունների միաձուլումը փաստորեն տեղի է ունենում մտքում՝ ներքնապես, որովհետև կարդալու կարողության ձևավորման այս աստիճանում երեխան, առանց վանկի կամ բառի մեջ եղած բոլոր տառերը ճանաչելու, չի կարող այն կարդալ: Գրաճանաչության ուսուցման գլոբալ կամ բառային մեթոդով կարդալ սովորեցնելիս նախապատրաստական շրջանի տևողությունն ավելացվում է, և բառերի գծային մոդելների օգնությամբ տարվող «կարդալու» վարժությունների միջոցով երեխաների մեջ ձևավորվում է ամբողջական բառերով կարդալու ալգորիթմ: Առաջադրված նկարբառերի անվանումները գտնելու, դրանք ճիշտ արտասանելու, ըստ արտասանության բնական միավորների դրանք մոդելավորելու, յուրաքանչյուր վանկի մեջ եղած հնչյունների քանակը և որակը որոշելու և մոդելի վրա անցկացնելու վարժությունների ընթացքում բառը բազմակողմանիորեն՝ թե՞ հնչյունային և թե՞ վանկային կազմի տեսակետից բավականաչափ ճանաչվում է: Ուշադրության կենտրոնում հիմնականում ամբողջական բառը դնելը, ինչպես արվում է հնչույթաբառային մեթոդով պարապելիս, և վարժություններն ամբողջական բառապատկերի շուրջ կատարելը նպաստում են կարդալու սկզբնական միավորը հենց սկզբից ևեթ բառը դարձնելուն, երեխաների մեջ մշակվում է ամբողջական բառերով կարդալու կարողություն: Սակայն դրան զուգընթաց թե՞ նախապատրաստական և թե՞

գրաճանաչության այբբենական շրջանում անհրաժեշտ վերլուծական ու համադրական աշխատանքներ են կատարվում նաև բառի հնչյունային կազմի շուրջ, որպեսզի ընթերցվող բառի մեջ աշակերտը կարողանա տեսնել բոլոր տառերը, կարողանա բառը կարդալ իր ամբողջության մեջ վերցրած, բոլոր կարգի փոփոխությունները նկատելով ու գրանցելով: Այս հատկանիշներից ամենակարևորը կարդացածը հասկանալն է. որը կարդալու ուսուցմանը զուգընթաց պետք է իրականացվի: Այս շրջանում կարդացածը հասկանալու գործողությունը դեռևս որոշակի կերպով առանձին կամ անջատ է կարդալուց. երեխան նախ կարդում է գրվածը, ապա հասկանում:Այս կրկնությունը կամ երկրորդ ընթերցումը փաստորեն հասկանալու համար է արվում. կարդացածի հնչյունային կազմի կրկնությունը միջոց է դառնում նրա բովանդակության մեջ թափանցելու, այն ընկալելու համար: Բառի ու բառաշարքերի ընթերցումն այն առանձնահատկությունն ունի, որ երեխաները բառի մեջ եղած բոլոր տառերը տեսնելու, դրանք իրենց համապատասխան հնչյուններին վերածելու և վանկերի ու ամբողջական բառի մեջ միավորելու հետ միասին պետք է կարողանան պահպանել նաև հայերենին հատուկ բառային շեշտը, որը չնչին բացառությամբ միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավոր հնչյունի վրա: Եթե այդ ձայնավորը ը-ն է, այդ դեպքում շեշտը դրվում է նախորդ վանկի ձայնավորի վրա, որովհետև ը-ն շեշտ չի վերցնում: Բառը հեշտ կարդալ սովորեցնելու գործում կարևոր նշանակություն ունեն հատվող այբուբենով կատարվող վարժությունները, երբ երեխաները վանկային ու հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, տառային համադրություններ են կատարում և վանկերով ու ամբողջովին կարդում վանկ առ վանկ հավաքած բառը: Օգտակար պետք է համարել նաև նմանությամբ կարդալը, որը հատկապես մեծ կիրառություն ունի բառաշարքերն ընթերցելիս: Այստեղ ընթերցվող նյութի թե՛ քանակական և թե՛ որակական բարդացում է կատարվում, որովհետև բառաշարքերը կազմվում են յուրաքանչյուր շարքում վանկային կառուցվածքով ու հնչյունային կազմով նման բառերի ընդգրկման սկզբունքով, որպեսզի առաջին բառի ընթերցումը հիմք ստեղծի երկրորդի ընթերցման համար: Այս բառաշարքերից յուրաքանչյուրում ընդգրկված առանձին խումբ բառերի միջև լինում են և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, առաջինը՝ ընթերցումը հեշտացնելու, իսկ երկրորդը՝ բառն արտաբերելուց առաջ այն անպայման մտովի կարդալու համար: Այս ինքնաստուգումը խիստ կարևոր է, որպեսզի երեխան առանց կարդալու, միայն կռահումով չարտասանի բառը: Բառակապակցության ընթերցումը ևս

իր առանձնանահատկությունն ունի, և դա ուսուցման ժամանակ պետք է հաշվի առնել: Բառերի կապակցման, միմյանց վերագրելու ամենափոքր միավորը բառակապակցությունն է, որն ինչպես առանձին վերցրած, այնպես էլ նախադասության մեջ գիտակցվում է որպես ինքնուրույն, կայուն կամ ժամանակավոր կապակցություն: Այդ կապակցված լինելը կամ հատկանիշը առարկային վերագրելը պետք է արտահայտվի նաև կարդալու եղանակով կամ բառերի արտաբերման հնչերանգով, սրպեսզի կարմիր վարդ, սարի շուշան բառակապակցություններից յուրաքանչյուրն արտաբերվի որպես իմաստով կապված միավոր, դրանցում եղած բառերը չհնչեն որպես առանձին ու անկախ միավորներ: Այստեղ բառակապակցության մեջ մտնող բառերի կապը զուտ տրամաբանական է, քերականական արտահայտություն չունի, սակայն ընթերցման ժամանակ ձայնի բարձրացումով ու ցածրացումով այն կապն այնպես ցայտուն պետք է արտահայտվի, որպեսզի լսողն այդ երկու բառն ընկալի որպես միմյանց հետ կապված մի ամբողջություն: Նախադասության ընթերցումը ևս իր առանձնահատկությունն ունի, և այն որոշակի դժվարություն է ներկայացնում երեխաների համար: Նախադասության մեջ մտնող բառերի միջև եղած փոխադարձ կապվածությունը երեխաներին գիտակցել տալու համար պետք է կարդալուց հետո նրա վերաբերյալ հարցեր տալ: Օգտակար պետք է համարել նաև ընթերցման տեմպի դանդաղեցումը, կրկնաընթերցումը և կարդացածի պատմելը: Դրանք հնարավորություն են տալիս ճիշտ ընկալելու ոչ միայն կարդացած յուրաքանչյուր բառի բառիմաստը, այլև դրանց միջև եղած տրամաբանական ու քերականական կապերը և ամբողջ նախադասության միտքը, որը ոչ թե նրա մեջ եղած բառերի բառիմաստների պարզ գումարն է, այլ իմաստային բոլորովին նոր որակ: Կապակցված բնագրի ընթերցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այստեղ տառի, վանկի ու բառի փոխարեն ընկալման միավորներ են դառնում ամբողջական նախադասությունները, որոնց ընկալումն ու միմյանց հետ կապակցումը երեխայի համար լուրջ դժվարություն է ներկայացնում: Բնագրի ընթերցման մյուս դժվարությունը կախված է հնչերանգի զգացողության բարդացման, տրամաբանական շեշտերի ու դադարների պահպանման հետ: Եթե նախադասությունը կարդալիս երեխան գրեթե յուրաքանչյուր բառից հետո դադար է տալիս, ապա այստեղ դադարները պետք է լինեն յուրաքանչյուր նախադասության վերջում, ձայնի բարձրացումն ու ցածրացումը կապված պետք է լինեն նախադասության տրամաբանական շեշտի և վերջակետի ճիշտ զգացողության հետ:Այս նպատակով յուրաքանչյուր բնագիր կարդալուց առաջ երեխաներին պետք է

դիտել տալ բնագրին վերաբերող նկարը, իսկ ապա զրույց անցկացնել դրա շուրջ, որպեսզի հնարավոր լինի նրանց թեմայի ոլորտը մտցնել: Դրան մեծապես կարող է օգնել նաև բնագրի դիտումը կամ «լուռ ընթերցումը», որը լուռ կարդալու ուսուցման ձևերից մեկն է: Գործադրելի են նաև բառերի շուրջ տարվող բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը, կրկնաընթերցումը և այլն, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին վարժեցնել բնագրի ընթերցման մեջ, սովորեցնել գեղեցիկ ու կանոնավոր կարդալ, տիրապետել կարդալու կարողությանը:

ԳԼՈՒԽ II

2.1 Ընթերցելու կարողությունների ձևավորման մեթոդները

Ընթերցելու մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է ոչ միայն սահուն, հասկանալով կարդալու կարողությունների զարգացմանը այլև սեր և հետաքրքրություն է առաջացնում դեպի ընթերցանությունը:

Մայրենիի դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

- զրույցը
- բնագրի ընթերցումը
- բառային աշխատանքը
- պատմումը
- ամփոփումը

Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է լավ ընթերցանությունը: Այդ որակներն են՝

- Ճիշտ կամ անսխալ կարդալ
- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալ,
- արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
- արագ կարդալ:

Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու: Ընթերցանության ընթացքում, երբ աշակերտը կարդում է, նա «իր վրա է վերցնում» կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Ցանկացած մեթոդ օգտագործելիս կարելի է դասարանը բաժանել մի քանի խմբերի, յուրաքանչյուր խմբի հանձնարարել իրենց կատարած առաջադրանքը ներկայացնել դասարանի ուշադրությանը: Կարելի է դերային խաղ կազմակերպել, քննարկել դերերով և մարմնավորել ստեղծագործության հերոսներին: Արդյունավետ է նաև սովորողներից մեկին հանձնարարել տեղեկություններ հավաքել տվյալ հեղինակի, գրողի մասին, կերպարանավորել նրան: Դասարանին էլ առանձին հանձնարարել հարցեր պատրաստել գրողին ուղղելու համար: Եթե այս մեթոդները կիրառվում են մայրենիի դասաժամին, ապա պարտադիր պետք է ուշադրություն դարձնել նոր բառերին, արտահայտություններին: Արտադասարանական ընթերցանության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել նոր բառերի ուղղագրությանը, հոմանիշ և հականիշ բառերի բացատրությանը, բառերի ոճական տարբերություններին, խոսքիմաստային պատկանելիությանը: Արտադասարանական ընթերցանության նախապատրաստելիս ուսուցիչը պետք է հանդես գա ներածական խոսքով՝ նոր տեղեկություններ և գիտելիքներ հաղորդելու համար: Ուսուցչի ներածական խոսքը լեզվաոճական տեսակետից պետք է լինի օրինակելի՝ հստակ, սահուն, պատկերավոր ու արտահայտիչ, բայց պարզ, մատչելի, հասկանալի ու անբռնազբոսիկ: Առաջին ընթերցման ժամանակ ուսուցիչը պետք է բացատրի դժվարհասկանալի մտքերն ու անծանոթ բառերը, սակայն բուն նպատակը պետք է լինի պատմվածքում արտահայտված զգացումներին ու մտածումներին համազգաց դարձնելը, Գոգոլի արտահայտությամբ, դրանք հոգով ու սրտով նրանց զգացնել տալն է: Գրական երկի ընթերցումը մեծապես նպաստում է նրանում արտահայտված հույզերի ու մտքերի ըմբռմանը, ամրակայում ու զարգացնում է գեղարվեստորեն կարդալու հմտությանը, հարստացնում բառապաշարը գրական բառաձևերով, պատկերավոր դարձվածքներով ու արտահայտություններով: Արտահայտիչ ընթերցանությունը հղկում, մշակում և ավելի արտահայտիչ ու իմաստալից է դարձնում աշակերտի խոսքը: Միջին դպրոցում ընթերցողը դեռևս չի ընկալում գրվածի լեզվաոճական կամ գրականագիտական կողմերը: Նա կարդացծը ընկալում է ամբողջության մեջ, առանց գիտական բաժանումների: Սովորողին հետաքրքրում է ոչ թե գրողը, կամ ինչպես է գրված, ի՞նչ գաղափարներ և իմաստներ և ներքին իմաստ է դրված գրական երկի մեջ, այլ նա կարդում է՝ հաճախ անտեսելով գրվածքի հեղինակին, իսկ գրական ստեղծագործությունը կարող է այնքան տպավորվել, որ նրան թվա, թե ինքը ևս մեկ

մասնակից է պատմվող գործողությունների: Դեռահասության նախաշեմին երեխան ավելի շատ իր մասին խոսելու, իրեն տեսնելու իր զգացածն արտահայտելու կարիք է զգում, քան գրական երկը գիտականորեն վերլուծելու անհրաժեշտություն: Դրա համար ուսուցիչը զգուշորեն և հմտորեն պետք է մոտենա այս հարցին՝ ընտրելով սովորողի տարիքային առանձնահատկությունները: Ուսուցիչը պետք է փորձի ուղղորդել ճիշտ ընթերցանությամբ զբաղվել՝ հաշվի առնելով այն, որ միջին դպրոցի աշակերտը ակնառու-առարկայական մտածողությունից աստիճանաբար անցում է կատարում դեպքի պատկերավոր մտածողություն, հետևաբար՝ վերացարկում: Այս տարիքում նկատվում է երևակայության բուռն զարգացում, դեռահասն ապրում է երևակայությամբ, զանազան արկածների, սխրանքների մասին երազանքներով: Վաղ դեռահասության տարիքում դեռահասներն անհագ ցանկություն են ունենում ճանաչելու իրենք իրենց, դիմացի մարդուն , աշխարհը, ընդհանրապես ողջ տիեզերքը: Մանկավարժ-հոգեբանի կարծիքով դեռահասը պատրաստ է ուսումնական նյութը ընկալել ամբողջությամբ, բարձր որակներով: Դրա համար էլ առավել նախընտրելի է հանձնարարել նրանց ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին ասույթներ, հատվածներ մեծերի նամակներից, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ, մանկական գրականություն հայրենի և արտասահմանյան գրողների կողմից: Արտադասարանական ընթերցանությունը նպաստում է սահուն և վարժ ընթերցելուն: Ընթերցած նյութի հարցման ժամանակ ուսուցիչը պետք է հետևի. արդյո՞ք աշակերտները հասկացել են տեքստի գաղափարը, հիմնական միտքը: Աշակերտները պետք է բացահայտեն կարդացած նյութի բովանդակությունը, տարբերակեն կարդացած տեքստի տեսակները՝ պատմողական, նկարագրական, դատողական, տարբերակեն տեքստի կառուցվածքային-իմաստային մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ: Անհրաժեշտ է պահանջել, որ աշակերտը վերարտադրի կարդացած տեքստի բովանդակությունը, համեմատի, հակադրի և գնահատի գործող անձանց արարքները, համադրի փաստերը և ընդհանրացնի: Նմանատիպ քննարկումների շնորհիվ աշակերտի մոտ զարգանում է կապակցված խոսքի հմտությունները, սեփական կարծիքը հայտնելու կարողությունը և ինքնավստահություն: Շատ կարևոր է, որ աշակերտը կարողանա կարդացած տեքստի բովանդակության հիման վրա փաստարկված խոսք կառուցի, զանազանի ստեղծագործական պատկերավորման միջոցները, իսկ դասարանից պահանջել լսել պատմողին, մասնակից լինել

քննարկումներին, բանավիճել թեմայի շուրջ՝ նոր փաստեր բերելով: Հետևողական աշխատանքի արդյունքում այս գործընթացը դառնում է աշխարհաճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց:

2.2 Ընթերցանության կարևոր հատկանիշներն ու ազդեցությունը երեխաների անձի ձևավորման գործընթացում

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության դաստիարակությունը մեծապես պայմանավորված է կարդալու կարողության ձևավորմամբ և հանդիսանում են արդիական խնդիր ազգի գրական ժառանգության ուսումնասիրման հարցում: Երեխաների մեջ ճիշտ, սահուն, գիտակցված, արտահայտիչ ընթերցանության կարողություններ ձևավորելը նախնական կրթության հիմնական խնդիրներից մեկն է: Եվ այդ խնդիրը չափազանց արդիական է, քանի որ ընթերցանությունը հսկայական դեր է խաղում մարդու կրթության, դաստիարակության և զարգացման գործում: Ընթերցանությունը պատուհան է, որի միջով երեխան տեսնում է և ճանաչում է աշխարհը և ինքն իրեն:Եվ այդ պատուհանն առաջինը սկսում ենք բացել տարրական դպրոցում:

Դպրոցը համամշակութային հաստատություն է, մշակութային, կրթական օջախ, որի հետ երեխան տարբեր դինամիկ հարաբերությունների մեջ է: Եվ այդ շրջանակներում է տեղի ունենում դպրոցական ուսուցման կազմակերպված, կարգավորված գործունեությունը: Դպրոցական ուսուցումը միայն մեկ նպատակ է հետապնդում՝ աշակերտին հաղորդել գիտելիք:

Ինչպես ցանկացած գիտություն, մանկավարժությունը ևս զարգանում է՝ օգտագործելով ազգային և համաշխարհային գիտական փորձը: Ինչպես բոլոր գիտությունները, մանկավարժությունը նույնպես ունի իր հասկացությունները: Մանկավարժության հիմնական հասկացություններն են, ուսուցումը, կրթությունը, դաստիարակությունը, զարգացումը, ինքնադաստիարակությունը, վերադաստիարակությունը: Մանկավարժությունը նույնպես կապված է մի շարք գիտությունների հետ: Առանց այդ կապերի մանկավարժությունը, ընդհանրապես գիտությունները չեն կարող զարգանալ: Մանկավարժությունը սերտ կապեր ունի գրականության հետ, որի փոխկապակցված գործունեության արդյունքում ձևավորվում է խոսքի մշակույթը, որը ձեռք է բերվում համառ ու հետևողական աշխատանքի միջոցով: Գրագիտությունը սկսվում է լեզվի ուսուցմամբ, և այդ մեծ գործում կարևոր նշանակություն պետք է հատկացնել արտադասարանական ընթերցանությանը, որը գրագետ անհատ ձևավորելուց զատ զարգացնում է աշակերտի բառապաշարը, կապակցված խոսքի ուսուցման համակարգը: Կապակցված խոսքը լեզվական

գիտելիքները խորությամբ յուրացնելու, դրանք կարողությունների, ապա հմտությունների վերածելու ամենալայն հնարավորությունն ունի: Արտադասարանական ընթերցանությունը աշակերտին սովորեցնում է գրքի վրա աշխատել, ինքնուրույնաբար գիտելիքներ ստանալ, ինֆորմացիայի հեղեղի մեջ ճիշտ կողմնորոշվել: Բոլոր ժամանակների համար էլ սովորել սովորեցնելու, ինքնակրթության, ինքնագործունեության հարցերը լուրջ կարևորություն են ունեցել: Ղ. Աղայանը գտնում էր, որ գրել , կարդալը չէ գործի էական նպատակը, «այլ միջոց է, որ պիտի ուսուցանվի երեխային նորա համար, որ նա դորա միջնորդությամբ սկսե ուսուցանել, կրթել ինքն իրեն»: Ինքնակրթության համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ տալը կյանքի հրամայական պահանջ է, ուստի այն ուսուցման հիմնական նպատակ է, որին ծառայելու է կոչված նաև կապակցված խոսքի հմտությունների ձևավորումը, այդ թվում բոլորից շատ խոսքի իմաստային վերլուծության հմտությունների մշակումը:

Եզրակացություն

Աշխատանքի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

1. Կարդալու սկզբնական կարողության համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել ուսումնական մյուս առարկաների ընձեռած հնարավորությունները ևս:
2. Տարրական դասարաններում ուսուցման հիմնական մեթոդիկան հենվում է մայրենի լեզվով ընթերցանության վրա, որտեղ շեշտը դրվում է կրթության և դաստիարակության հետ զուգահեռ ընթերցանության միջոցով երեխաների գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային, ազգային ու համամարդկային արժեքների ձևավորման գաղափարի վրա:
3. Ընթերցանությունը տարրական դասարաններում այն միակ ուղին է, որ տանում է ուսումնադաստիարակչական գործընթացի մանկավարժական հիմնախնդիրների լուծման բարձր դասարաններում դրանց հետագա արդյունավետ և հարթեցված ճանապարհի հարթեցման:
4. Կրտսեր դպրոցում ուսումնական գործընթացի ժամանակ ընթերցանությունը հետապնդում է այնպիսի փոխկապակցված նպատակներ ու խնդիրներ, ինչպիսիք են երեխաների իմացական գործընթացների զարգացումը, խոսքի և բառապաշարի ձևավորումը, արժեհամակարգի և բարոյական, գեղագիտական, գաղափարական կերպարի ձևավորումն ու զարգացումը:

Օգտագործած գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս. «Հայոց լեզու», բառ և խոսք, 2-րդ հրատ. Եր. «Լույս» 1986թ
2. Աղայան Ղ. «Երկեր» հ. 4, Եր. 1950թ
3. Գյուլամիրյան Ջ. Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ» 2001թ
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում «Նախաշավիղ» N6 2010թ
5. Ա. Տեր-Գրիգորյան «Հայոց լեզվի մեթոդիկա» Եր. 1980թ